ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՏԵՂԱՅԻՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Նախաբան

Հայաստանի կառավարությունը միացել է Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ) նախաձեռնությանը 2011 թվականին և 2012 թվականին արդեն իսկ ներկայացրել իր գործողությունների առաջին ծրագիրը: Այս նախաձեռնության շրջանակներում իրականացվել է 4 գործողությունների ծրագիր:

2018 թվականին ձևավորվեց 2018-2020թթ. ԲԿԳ-Հայաստան գործողությունների ծրագիրը, որի հանձնառությունները բավական հավակնոտ են և փոխակերպիչ: ՏԻՄ բարեփոխումները մշտապես եղել են ԲԿԳ օրակարգի ուշադրության կենտրոնում: Ժողովրդավարության, լավ կառավարման, կոռուպցիայի կրճատման և մասնակցային կառավարման սկզբունքները ոչ միայն կարևորվեցին գործադիրի համար, այլև՝ օրենսդիրի և տեղային շրջանակների համար:

2020 թվականին ԲԿԳ-Հայաստան քարտուղարությունը հանդիպում-քննարկումներ սկսեց Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և խոշոր համայնքների ներկայացուցիչների հետ: Արդյունքում՝ 2020 թվականին Գյումրի և Վանաձոր համայնքները դարձան Տեղային-ԲԿԳ գործընթացի անդամներ միասնական (կոնսորցիում) ձևաչափով:

2022 թվականին Տեղական ԲԿԳ նոր անդամակցության գործընթացի մեկնարկի շրջանակներում անդամակցության համար դիմեցին Երևանի քաղաքապետարանը և Արմավիրի համայնքապետարանը: Արդյունքում Հայաստանից ևս երկու համայնք միացան Տեղական ԲԿԳ համայնքին:

Մարտին մեկնարկեցին հանդիպումներ քաղաքացիական հասարակության գործընկերների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ: Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի աջակցությամբ ապահովվեց փորձագիտական աջակցություն Տեղական ԲԿԳ գործընթացին դիմելու հայտը լրացնելու և գործողությունների ծրագրի առաջնահերթությունները և նախագիծը մշակելու ուղղությամբ:

Նշանակվեցին պատասխանատու անձինք և համայնքային ներկայացուցիչներից, և ՔՀ կազմակերպություններից: Արմավիրի համայնքապետարանի կոնտակտային անձ նշանակվեց Թամարա Շառոյանը, իսկ ՔՀԿ ներկայացուցիչներից՝ Նաիրա Առաքելյանը

և Անի Հարությունյանը: Շահագրգիռ կողմերը հունիսին պարբերական առցանց հանդիպումների արդյունքում՝ համաձայնեցին համագործակցել և ներդնել ջանքեր արդյունավետ երկխոսություն ձևավորելու և տեղային գործողությունների ծրագիրը համատեղ մշակելու համար:

Քննարկումների արդյունքում կարևորվեցին **մասնակցային** մոտեցումները:

Առաջարկությունների ձևավորման փուլում առաջարկվեց 2 հիմական ուղղություն՝ բարեվարքության համակարգի և մասնակցային բյուջեի մեխանիզմի ներդնում:

Ռազմավարական տեսլական

Արմավիրը Հայաստանի խոշորագույն համայնքներից է, 2021թ-ից. իր մեջ ներառում է 11 բնակավայր՝ ք. Արմավիրը, Նորավան, Խանջյան, Հացիկ, Մյասնիկյան, Մայիսյան, Լուկաշին, Սարդարապատ, Այգեվան, Լենուղի և Արաքս գյուղերը: Ժողովրդավարական, արդար և մասնակցային մեխանիզմների ներդնումը տեղային մակարդակում Արմավիրի համայնքապետարանի առաջնահերթությունների ցանկում է: Այն նպաստում է տեղական կառավարման մարմնի թափանցիկության բարելավմանը, ապահովում է մասնակցության գործընթացների առաջընթացը՝ միջազգային և տեղական քաղաքացիական հասարակության գործընկերների և միջազգային համայնքային գործընկերների հետ կառուցողական համագործակցությամբ:

Տեղային-ԲԿԳ անդամակցումը մեկնարկելիս և տեղային գործողությունների ծրագիրը մշակելիս և համայնքապետարանի ներկայացուցիչները, և քաղաքացիական հասարակության գործընկերները հաշվի են առել համայնքի առկա ռեսուրսները, պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները:

*Համայնքի զարգացման և առաջխաղացման ուղենիշ է հանդիսանում զարգացման հնգամյա ծրագիրը: Ծրագրի և միջոցառումների հիման վրա հաստատվում է բյուջեն: Հաճախ բյուջեի վերաբաշխումը, կամ կրճատումը, կամ որոշ միջոցառումների համար հատկացումների ավելացումը հասկանալի չեն համայնքի բնակչության համար և չկա հասանելի հարթակ տեղեկատվության մատչելի և համապարփակ մատուցման համար: Ուստի քաղաքականությունների և ռազմավարական ծրագրերի թափանցիկությունը և ժամանակին տրամադրված տեղեկատվությունը կնպաստի **քաղաքականությունների մշակման և իրականացման թափանցիկությանը**:*

*Տեղային-ԲԿԳ ծրագրի ընդունումից հետո համայնքապետարանը կձևավորի **աշխատանքային խումբ**, որը կաջակցի համայնքապետարանի հանձնառությունների իրականացման վերաբերյալ հանրային քննարկումներ կազմակերպելու, կրթական գործընթացներ կազմակերպելու, համայնքում կոնկրետ հանձնառությունների իրազեկման արշավներ կազմակերպելու, մշտադիտարկում իրականացնելու և այլ գործընկերներ ներգրավելու հարցերում:*

*Քաղաքացիական հասարակության գործընկերները և այլ կազմակերպություններ կարող են կազմակերպել և ձևավորել **անկախ մշտադիտարկման մեխանիզմ**՝ Տեղային-ԲԿԳ գործընթացի մեկնարկի, իրականացման, մասնակցայնության ապահովման և հաջորդ քայլերի համար առաջարկներ ներկայացնելու համար:*

1. Բարեվարքության համակարգի ներդնում		
Լիազոր մարմինը		Արմավիրի համայնքապետարան
Լիազոր մարմնի պատասխանատու անձը ,պաշտոնը, վարչությունը, էլ. հասցե, հեռախոսահամարը		Թամարա Շառոյան, Արմավիրի համայնքապետարանի զարգացման ծրագրերի և արտաքին կապերի պատասխանատու sharoyantamara@gmail.com 093358006
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ մարմիններ/բաժիններ	Արմավիրի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին:
	Քաղաքացիակա նհասարակություն, մասնավոր հատված	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, Արմավիրի Զարգացման Կենտրոն ՀԿ, Երիտասարդական ավանգարդ ՀԿ
Կարգավորման ենթակա խնդիրը և հիմնական նպատակը		Բարեվարքության համակարգի ներդրման գործընթացի մեկնարկ: Համակարգի թերությունը կայանում է նրանում, որ չնայած Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մեկնարկել է վարքագծային կանոնների օրինակելի ձևերը, այնուամենայնիվ դրանք գործնականում կիրառելու և ըստ համայնքային կարիքների ձևավորելու կարիք կա: Ուստի անհաժեշտ է վերլուծել բարեվարքության համակարգի ներդրման շրջանակը և մշակել դրա իրագործման միջոցառումները և կարգավորումները և համայնքային/քաղաքացիական ծառայողների, և այլ շահագրգիռ կողմերի համար:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը		Մշակել բարեվարքության համակարգի համար հայեցակարգային փաստաթուղթ: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ Արմավիրի համայնքապետարանի բարեվարքության համակարգին վերաբերելի առաջարկությունների

	(էթիկայի հանձնաժողովներ, բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, համայնքային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման կարգավորումների կիրառման) օրենսդրական ու գործառնական մակարդակով նախարարությանը վերապահված խնդիրների դուրսբերում և քննարկում: Էթիկայի հանձնաժողովի, բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ներդրման գործընթաց. ապահովելով դրանց գործունեության կազմակերպման մոդելի մշակումը, հանձնաժողովների գործունեության կազմակերպման, բարեվարքության հարցերով կազմակերպիչների նշանակման ու գործունեության շրջանակի սահմանումը՝ հաշվի առնելով համայնքային մակարդակով կառույցի գործունեության առանձնահատկությունները:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Թափանցիկություն Հաշվետվողականություն Մասնակցություն Ինովացիա
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Բարեվարքություն և մասնակցության ինստիտուցիոնալ մեխանիզմի ներդնում
Կայուն զարգացման ո՞ր նպատակների կամ թիրախների իրականացմանն է աջակցում	Ապահովել հավասար հնարավորություններ և կրճատել արդյունքների անհավասարությունները, այդ թվում՝ բացառելով խտրական օրենքները, քաղաքականությունները և գործելաձևերը՝ և խթանելով այս առումով պատշաճ օրենսդրության, քաղաքականությունների և գործողությունների ընդունումը:
Ընթացիկ գործողություններ	
Բարեվարքության համակարգի համար անհրաժեշտ առանձնահատկությունների քարտեզագրում:	
Էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտների ներդրում՝ հաշվի առնելով համայնքային առանձնահատկությունները: Օրենսդրականև իրավական կարգավորումների ձևակերպում:	

ՈՒղեցույցների ու կանոնադրությունների նախագծերի մշակում, բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնի անձնագրերի կազմում և դրանց ներառում որպես միջոցառումներ համայնքի միջոցառումների ծրագրում:

2. Մասնակցային բյուջետավորման ներդնում		
Լիազոր մարմինը		Արմավիրի համայնքապետարան
Լիազոր մարմնի պատասխանատու անձը ,պաշտոնը, վարչությունը, էլ. հասցե, հեռախոսահամարը		Թամարա Շառոյան, Արմավիրի համայնքապետարանի զարգացման ծրագրերի և արտաքին կապերի պատասխանատու sharoyantamara@gmail.com 093358006
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ մարմիններ/բաժիններ	Արմավիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժին:
	Քաղաքացիական նհասարակություն, մասնավոր հատված	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, Արմավիրի Զարգացման Կենտրոն ՀԿ, Երիտասարդական ավանգարդ ՀԿ
Կարգավորման ենթակա խնդիրը և հիմնական նպատակը		Ժողովրդավարական զարգացման հիմքում ընկած է քաղաքացիների՝ իրենց ընտրած ներկայացուցիչների հանդեպ վստահությունը առ այն, որ վերջինները կանդրադառնան համայնքային կյանքի բարելավմանն ուղղված իրենց մտահոգություններին: Սա հատկապես կարևոր է համայնքային կառավարման մակարդակում, որտեղ ծառայությունների մատուցման արդյունավետությունն ու որակը զգացվում են ուղղակիորեն, իսկ թափանցիկ և հաշվետու որոշումների կայացումը մեծացնում է սոցիալական և տնտեսական զարգացման հավանականությունը:Առկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում տեղական մակարդակում առկա է քաղաքացիների ցածր մասնակցայնության մակարդակ՝ չնայած նրան, որ իրավական տեսանկյունից մասնակցության համար անհրաժեշտ նախադրյալները ապահովված են:

	Քանի որ համայնքային բյուջեն վերաբերում է համայնքի ցանկացած բնակչի, բյուջեին առնչվող որոշումները մեծ հնարավորություն են տալիս բնակիչներին ներգրավվելու մասնակցային ժողովրդավարությանը: Տեղական բյուջետավորման գործընթացում քաղաքացիների մասնակցությունը կօգնի համայնքային իշխանություններին լինել էլ ավելի տեղեկացված և կայացնել առավել արդյունավետ որոշումներ, ինչպես նաև թույլ կտա բնակիչներին տեսնել և գիտակցել, որ իրենց ձայնն ու տեսակետները կարևորվում են, որ իրենց առաջարկած գաղափարներն ու ծրագրերը քննարկվում, դիտարկվում են և իրականացման հնարավորություն են ստանում տեղական իշխանությունների կողմից:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Մասնակցային բյուջետավարման ներդրման միջոցով խթանել բնակիչների անմիջական մասնակցությունը համայնքային որոշումների կայացմանը, համայնքային բյուջեի պլանավորմանն ու կառավարմանը, բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահությունն ու բնակիչների քաղաքացիական պատասխանատվությունը:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Թափանցիկություն Հաշվետվողականություն Մասնակցություն Նորարարություն
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Նորարարություն/տեխնոլոգիա Տեղեկատվության մատչելիություն
Կայուն զարգացման ո՞ր նպատակների կամ թիրախներ իիրականացմանն է աջակցում	Կայուն քաղաքներ և համայնքներ
Ընթացիկ գործողություններ	
Մասնակցային բյուջետավորման համակարգի համար անհրաժեշտ առանձնահատկությունների քարտեզագրում:	

Տեղական մակարդակում որոշումների կայացմանը քաղաքացիների մասնակցայնության խթանման նպատակով համայնքային կառավարման տեղեկատվական համակարգում «մասնակցային բյուջետավորման» էլեկտրոնային ենթահամակարգի ներդնում,
ՈՒղեցույցների ու կանոնադրությունների նախագծերի մշակում, մասնակցային բյուջետավորման հարցերով կազմակերպիչների պաշտոնի անձնագրերի կազմում և դրանց ներառում որպես միջոցառումներ համայնքի միջոցառումների ծրագրում:

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

29.11.2022